«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» մայիսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-16/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ի 11.05.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 11.05.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել է «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ»

պետական կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգին:

Հայտերի բացման նիստը կայացել է 2015թ. ապրիլի 7-ին, իսկ 2015թ. մայիսի 8-ին Ընկերությունը ստացել է հայտարարություն «ՀՀ ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 49.1-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների, իսկ շինարարական աշխատանքների դեպքում՝ նաև ծավալաթերթ-նախահաշիվների թվաբանական ճշտությունը: Թվաբանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում: Գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 49.2-րդ կետի համաձայն՝ շինարարական աշխատանքների գնման դեպքում մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվների տարբեր տողերում նշված նույն աշխատանքների դեպքում աշխատանքների միավոր գները պետք է նույնը լինեն: Այդ գների երկու կամ ավելի տարբերակների դեպքում կընդունվի նվազագույնը, որի մասին պատվիրատուն երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության ունեցած տեղեկությունների համաձայն՝ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում տարբեր տողերով նշված նույն աշխատանքների գնային առաջարկներում տեղի են

ունեցել սխալմունքներ, հայտնաբերվել են անհամապատասխանություններ, որոնց մասին «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պարտավոր էր ծանուցել մասնակցին, ինչպես նաև «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պարտավոր էր տալ իր համաձայնությունը ճշտված գնային առաջարկի մասին:

Ընկերությունը գտնում է, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Կարգի 49.1-րդ կետի 4-րդ ենթակետով և 49.2-րդ կետով նշված պահանջները, այն է՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պարտավոր էր տալ իր համաձայնությունը ճշտված ծավալաթերթ-նախահաշվի վերաբերյալ, որի արդյունքում «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման, և նույնիսկ եթե «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն տվել է իր համաձայնությունը ուղղումների վերաբերյալ, ապա ինչու է պայմանագրի որոշման մեջ նշվել որպես նվազագույն գին՝ 30.542.443 ՀՀ դրամ, այլ ոչ թե նվազագույն գումարը:

«Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ն գտնում է, որ «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, չմերժելով «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտը, խախտել է Կարգի 49.1-րդ կետի 4-րդ ենթակետով և 49.2-րդ կետով սահմանված պահանջները:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել «ՀՀ ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ի ներկայացրած բողոքի կապակցությամբ «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 18.05.2015թ. թիվ 02/04/1677-15 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից բողոքում նշված խնդիրը քննարկվել է «ՀՀ ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1»

ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից և նշված ընթացակարգի արդյունքում «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին գնահատող հանձնաժողովի որոշման դեմ «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ Պատվիրատուն առարկություններ չունի:

ՀՀ Արմավիրի մարզպետարանը 29.05.2015թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «ՀՀ ԱՄ-ԲԲԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2015թ. նիստի արձանագրության պատճենը:

3. ԳԲԽ-16/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-16/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՄ-ԲԲԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն և «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ն:

2. Պատվիրատուն ***10.04.2015թ.*** էլեկտրոնային եղանակով «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին ուղարկված գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի ստուգման արդյունքում հայտնաբերվել են անհամապատասխանություններ և ղեկավարվելով Կարգի 49.2-րդ կետով՝ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին տեղեկացրել, որ եթե ծանուցումն ստանալու պահից ***երեք աշխատանքային օրվա ընթացքում*** էլեկտրոնային եղանակով վերջինս չհայտնի իր համաձայնությունը, ապա ընկերության հայտը կմերժվի:

3. «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն ***16.04.2015թ.*** գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հայտնում է իր համաձայնությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների կատարման ճշգրտված ծավալաթերթ-նախահաշվին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2015թ. կայացած նիստի արձանագրության 1.7-րդ կետով որոշում է կայացվել «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչել՝ համապատասխանաբար որպես հրավերի պահանջներին բավարարող և ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ 10.04.2015թ. թիվ 1 որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվել է ներկայացնել ծավալաթերթ-նախահաշվում հայտնաբերված անհամապատասխանությունների ճշգրտում, որի վերաբերյալ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն տվել է իր համաձայնությունը ***մեկ օր ուշացումով:*** Նույն արձանագրության 1.3-րդ կետով կայացրած որոշման համաձայն՝ «ՀՀ ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ դադարեցրել է «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

4. ԳԲԽ-16/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումը և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ի 11.05.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի 18.05.2015թ. թիվ 02/04/1677-15 և 29.05.2015թ. գրությունները և կից փաստաթղթերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2015թ. և 26.05.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրությունները, հայտնում է հետևյալը.

«Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ն 11.05.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել «ՀՀ ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած

մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները: Սակայն բողոքի քննության ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.05.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրության 1.3-րդ կետով կայացրած որոշմամբ դադարեցվել է «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՄ-ԲԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Նկատի ունենալով, որ «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ի 11.05.2015թ. ներկայացրած բողոքն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած վերոնշյալ որոշման առկայության պայմաններում դարձել է առարկայազուրկ, ուստի առաջարկում ենք Ընկերության 11.05.2015թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ — Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ — Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-16/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար — Ռ. Մկրտչյան